ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2022

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Համարակալված բառերում և բառաձևերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:**

1. հասարակա-այինն երկիր, 2. եղնիկների խայ-ալը, 3. կարկաչ-ն առվակ, 4. Ա-թամար կղզի, 5. աչքի կո-, 6. ա- ու ահյակ, 7. աշխարհի չորս ծա-երը, 8. Սոֆ- մայրաքաղաք:

1) 1-ծ, 2-տ, 4-խ, 6-ջ
2) 2-տ, 3-ու, 5-պ, 7-գ
3) 1-ծ, 4-խ, 6-ջ, 8-իա
4) 3-յու, 5-պ, 7-գ, 8-իա

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) բաղադրիչներն են գրվում *անջատ:***

1) ի(մի)բերել, ծայրից(ծայր), տեր(Սարգիս), (այսու)հետև
2) դեմ(դիմաց), նոր(խարբերդցի), երկու(երրորդ), ի(զեն)
3) ըստ(իս), սրբություն(սրբոց), ձեռք(բերել), դուռ(դռան)
4) Սանկտ(Պետերբուրգ), (առ)այն, կուժ(կոտրուկ), ինչ(որ)է

3 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ, ԲԱՐԵՀՈՒՍՈ ՀՐՎԱՆԴԱՆ
2) ՄԵԾ ՀԱՅՔ, ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ, ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, ՌԻՉԱՐԴ ԱՌՅՈՒԾԱՍԻՐՏ
3) ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ԺԱՆ ԲԱՏԻՍՏ ՄՈԼԻԵՐ, ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
4) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՏՈՒՆ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

1) մեհենական, կղզեխումբ, հուզախառն, բնավեր
2) ատենակալ, աշխուժորեն, ալեծուփ, ալրաթաթախ
3) խուզարկու, գուշակություն, քրիստոնեական, կենսախինդ
4) թուլակազմ, հեծելազոր, վարագուրել, միութենական

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում *ը*-ի սղում կա:**

1) փխրուն, մանրավաճառ, եզրային, սանրել
2) բարձրաձայն, ակնհայտ, աստղազարդ, երփներանգ
3) ցածրահասակ, ծանրաձող, սանդղահարթակ, դստրիկ
4) մեղրածոր, կարծրանալ, ծնրադիր, կակղամորթ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) վարանում, տարակույս, երկբայություն, մեղադրանք
2) աջակցել, նպաստել, սատարել, ձոնել
3) մեծանուն, հանրաճանաչ, հռչակավոր, փառատենչ
4) սնամեջ, փուչ, ունայն, դատարկ

7 **Ո՞ր շարքի բոլոր զույգերն են կազմված հականիշներից:**

1) իրազեկ–անտեղյակ, քամահրանք–բամբասանք, բացասում–հաստատում
2) զարդարուն–անպաճույճ, անթաքույց–սքողված, տարտամ–որոշակի
3) շաղակրատ–քչախոս, գժտված–համերաշխ, կայտառ–շենշող
4) խաղաղ–փոթորկուն, անդորր–սաստիկ, լայնարձակ–անձուկ

8 **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***մի սանրի կտավ*** – նույն բացասական հատկություններն ունեցող
2) ***գլխի տակ փափուկ բարձ դնել*** –սնոտի խոստումներով խաբել
3) ***ուրբաթը շուտ գալ, քան շաբաթը*** – որոշված գործը խափանող անակնկալ բան պատահել
4) ***սևը սպիտակ դարձնել*** – թերությունները շտկել

9 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Տատիցս մենք միշտ առնում էինք մաքուր սպիտակեղենի զգլխիչ հոտը:
2) Ծերունու հետնորդները սրբությամբ պահպանում էին նրա թողած մասունքները:
3) Որդին վերջապես տեղի տվեց մոր թախանձագին խնդրանքին:
4) Մարզպետունին զգում էր վերահասու վտանգը, սակայն չէր կարողանում իշխաններին միավորել:

10 **Ո՞ր տարբերակում է ընդգծված բառը իմաստով տարբերվում մյուս տարբերակներում ընդգծվածներից:**

1) Այդպես էլ ծնվեց մեկը նրանցից,
   Ծնվեց նա՝ **Այր** մի՝ Մաշտոց անունով:
2) Ես գրում եմ բրուտների **այրի** մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե չարխի կլոր տախտակը:
3) Հաշվեսեղանի հետևում նստած էին սրճարանի տերերը՝ մի **այր** ու մի կին:
4) Ուսումնասիրությունն ավարտելուց հետո կցեց մի հիշատակարան, թե ինքն արդեն **այր** է մի հիվանդ, ձեռքն այլևս հաստատ չէ, չի զորում նաև աչքը:

11 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց գործիական հոլովը կարող է կազմվել *բ*-ով:**

1. արյուն, 2. մաս, 3. զորություն, 4. անձ, 5. անուն, 6. կատարում, 7. իրավունք

1) 1, 3, 5, 6
2) 1, 2, 3, 7
3) 2, 3, 4, 7
4) 2, 4, 5, 6

12 **Ո՞ր շարքում ածական *չկա:***

1) խորտիկ, թանկարժեք, հիմնովին
2) անշուշտ, ոստրե, բրոնզաձույլ
3) հեծելազոր, բազմիցս, հպարտորեն
4) նույնպիսի, հեռավոր, առանձնապես

13 **Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

1) Կրիայի զրահի զարդանախշերից յուրաքանչյուրը ամեն տարի հարստանում է մեկական շրջանագծով:
2) Հենց այդ պահին աշխարհի օրենսդիր Փարիզում կտրվեց տասնհազարամյա արվեստի ցուցահանդեսի ժապավենը:
3) Երեկոյան, երբ երկնքում սավառնում էին մեր թռուցիկները, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
4) Նրան պատասխանեց զանգակի ղողանջը, որ քանի՜երորդ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից:

14 **Ո՞ր տարբերակում դերանվան՝ սխալ հոլովաձևով գործածություն *չկա:***

1) Ես քո վրա հույս չեմ դնում:
2) Մեզ մոտից մինչև այդ գյուղը ոտքի ճանապարհ է:
3) Նա դեռ իրեն օրում վիշտ ու տառապանք չէր տեսել:
4) Մինչև լեռնագագաթը ինձ հետ ոչ ոք չբարձրացավ:

15 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) եկավ, հասկացել եմ, դարձի՛ր
2) բարձրացի՛ր, ասաց, դողացող
3) հուսանք, ծիծաղում եմ, վշշում է
4) մնացինք, կհավատա, խոսում էր

16 **Ո՞ր նախադասությունն է բարդ ստորադասական:**

1) Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին:
2) Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները. խոնավություն կաթեց քարերի վրա:
3) Օրը մի քանի անգամ նրանք նայում էին ամրոցի շուրջը տարածվող դաշտերի հեռուն՝ պարզելու՝ չի երևում արդյոք թշնամական մի շարժում, ասպատակների մի խումբ:
4) Քահանան լուռ ու խորհրդավոր ասեղնագործում էր տառերը, օրը՝ մեկ տառ, երբեմն նաև պատմություններ էր անում սուրբ Մաշտոցի մասին:

17 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Ով մի քանի օր տեսած չէր լինում Նահապետի աշխատելը, նկատում էր տարբերությունը, ով ամեն օր էր տեսնում, կարծում էր, թե պատն անշարժ իր տեղում է և բոլորովին չի բարձրանում:



18 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն նախադասությունների համարները, որոնցից երկուսում էլ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:
2. Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:
3. Քաղաքապետ իշխանը հպարտ ու վեհ ճոխ ու զարդարուն հագուստով այդ մարդը գալիս էր դանդաղ քայլերով շրջապատված շքախմբով:
4. Աշնան պայծառ առավոտ էր Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ:

1) 1, 2
2) 2, 3
3) 1, 3
4) 2, 4

19 **Ո՞ր նախադասության մեջ միջոցի խնդիր կա:**

1) Շահ-Աբասը սիրով լսեց նրա խնդրանքը, ապա մեծամեծ խոստումներ արեց կաթողիկոսին և հասավ Հայաստան:
2) Թագավորի հրամանով նրան դատապարտեցին մահվան:
3) Ու խավարն անհուն գգվանքով թեթև Ծավալվեց շուրջս ու փռվեց վրաս:
4) Միրհավը, հանգիստ քուջուջ անելով, փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները:

20 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ** ***չկա:***

1) Սարդարապատում ողջ հայ ժողովուրդը միասնական պայքարի դուրս եկան:
2) Դրսում ցուրտ էր, և գյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէին երևում:
3) Պետական բոլոր մուծումները ձեռնարկության կողմից կատարվել է ժամանակից շուտ:
4) Այդ օրը պահարանից անհետացավ ամուսնու նվիրած մատանին մի քանի ուրիշ զարդերի հետ:

21 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Ըմբոստ մի ծառ՝ առույգ, առողջ ոստերով, անտեսելով արգելքները, անվրդով բարձրանում էր վեր՝ դեպի ամպշող լեռները:
2) Քանի դեռ լույս էր և ճանապարհը՝ լայն, գնում էի արագ՝ խուսափելով տարատեսակ վտանգներից և փորձանքներից:
3) Ադամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր Լիլիթին՝ աչքերը չհեռացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող մազերից:
4) Թե ում էի պարտական իմ փրկության համար, ես այդպես էլ չիմացա, բայց այդ միտքն ինձ երկար ժամանակ տանջում էր:

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քվեարկության դրեց նոր գյուղատեղ փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի հետևում մի պահ չերևացին փափախները.

1) …… որովհետև ճրագը թարթում էր լույսի հետ և տաքություն տալիս:
2) …… թվաց, թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սևացած առաստաղը:
3) …… մինչդեռ ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում:
4) …… որոնք ուրախ աղմուկով դուրս եկան:

23 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Զարթնում եմ. ամեն ինչ չքանում է, միայն դեռևս կարծես շարունակում եմ լսել նրանց մրմունջը:
2. Նրանցից ոչ մեկը չի փախչում. բռնում եմ, շոյում, սիրում, հանկարծ զգում եմ, որ երազ է, բայց շարունակվում է երազը. աղավնիները գլխիս վրա են, ուսերիս:
3. Ես երազումս տեսնում էի Ակոբի աղավնիները. իջել են նրանք գլխիս, ուսերիս, թևերիս:
4. Դրսում վառ լույս է արդեն, բայց դեռ երկար շարունակվում է աղավնիների երազի անիմանալի խայտանքը:

1) 3, 4, 2, 1
2) 3, 2, 1, 4
3) 4, 3, 2, 1
4) 4, 1, 3, 2

24 **Ո՞ր հատվածը արևմտահայերենով *չէ:***

1) Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է՝
Տեսանելով այսպես սեր՝
Դեպի թշվառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:
2) Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենակ կ’անրջեմ
Անհնարին, երկնագորով
Սեր մը, որուն տերը չեմ:
3) Իրիկվան մեջ, գյուղին քով,
Կը մրմնջե գուռն ուռիին տակ շքեղ:
Զայն կը լեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,
Աստղը՝ բյուրեղ արցունքով:
4) Ինչո՞ւ արդյոք խորշակահար
Կ’ընե ծաղկունք դեռափթիթ:

25 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:**

1) Քանի որ Փոքր Միերը չի կարողանում սպանել Չմշկիկ Սուլթանին և հոր վրեժը լուծել, այդ պատճառով փակվում է Ագռավաքարում:
2) Մեծ Միերը եղբայրներից միակն է, որ ժառանգում է հոր դյուցազնական ուժը և տիրություն անում իր երկրին ու ժողովրդին:
3) Որբացած Դավթին ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ, բայց նա կարճ ժամանակ անց չի ընդունում վերջինիս կաթը և սնվում է Սասունից ուղարկված մեղր ու կարագով:
4) Հեռանալով Բաղդադից՝ իրենց ճանապարհին Սանասարն ու Բաղդասարը տեսնում են մի բարակ, բայց զորեղ առու, որի ակունքի մոտ իրենց համար ամրոց են կառուցում:

26 **Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին թարգմանել Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:**

1) Ժողովողի գիրքը
2) Սողոմոնի առակները
3) Ծննդոց գիրքը
4) Դավթի սաղմոսները

27 **Ո՞րն է Պ. Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Իմ ցավը» բանաստեղծության մեջ:**

1) երիտասարդ տարիքում մեռնելը
2) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը
3) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը
4) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը

28 **Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից է տրված հատվածը:**

«Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում: Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին»:

1) «Սպիտակ ձին»
2) «Ալպիական մանուշակ»
3) «Միրհավ»
4) «Խոնարհ աղջիկը»

29 **Ո՞րը Հ. Թումանյանի քառյակի առաջին տող *չէ:***

1) Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան...
2) Մենք ամենքս հյուր ենք կյանքում...
3) Բերանն արնոտ մարդակերը էն անբան...
4) Հիմի բացե՞լ են հանդես...

30 **Տրված հատվածներից ո՞րն է Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:**

1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կգգվե տատասկին դժնյա:
2) Գնա՛, քարավա՛ն, ինձ հետդ քա՛րշ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս՝ գլուխս վար դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
3) Ազգեր են եկել, ազգեր գնացել և չեն ըմբռնել իմաստը նրա:
Բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ և թոթովում են հնչյուններն անմահ:
4) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տենչով անմեկին:

31 **Գ. Զոհրապի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:**

«Պերճուհին սևեր հագնող աղջիկ մըն է որ չամուսնանար. իր նշանը ետ եղավ առանց պատճառը հասկցվելու»:

1) «Զաբուղոն»
2) «Ճիտին պարտքը»
3) «Այինկա»
4) «Փոստա՛լ»

32 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Սահուն քայլերով, անձնշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի …….. անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով:

1) աղջիկ
2) ստվեր
3) ուրու
4) անուրջ

33 **Ո՞ր բառերում հնչյունափոխություն կա.**

1. բազմաձև, 2. ուխտադրուժ, 3. գահավիժել, 4. որդյակ, 5. հրավեր, 6. ընչաքաղց, 7. հանդիսավոր, 8. զեղծարար:

34 **Ո՞ր նախադասություններում անորոշ դերբայ կա:**

1. Հանելով վերարկուն՝ Պատրիկյանը հոգնած նստեց բազմոցին:
2. Մեր դժվարն էլ ինքնիրեն է լինելու, ու քո հեշտն էլ մի պատճառ է հնարելու, որ չլինի:
3. Նրանք գնում էին անհայտ մի ուղով՝ փրկվելու հույսը սրտներում պահած:
4. Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ:
5. Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի:
6. Այդ մենք ենք գալու, որ հինը փոխենք, որ աշխարհին տանք սեր ու խնդություն:

35 **Ո՞ր բառերում վերջածանց կա.**

1. ելուստ, 2. դանակ, 3. հրաշապատում, 4. քառակուսի, 5. առտնին, 6. խորաքնին, 7. տարբերակ, 8. սփյուռք:

36 **Ո՞ր տարբերակներում է նախադասության անդամի պաշտոնը սխալ նշված:**

Մի թխպամած օր, երբ ես և Թումանյանը Լոռուց վերադառնում էինք Թիֆլիս, երկար սպասեցինք հայկական գնացքին, որը պիտի կազմվեր հենց այդտեղ՝ կայարանում, բայց այդ գործն ուշանում էր, և ոչ ոքի հայտնի չէր՝ երբ պատրաստ կլինի:

1. **երկար** – որոշիչ
2. **գործն** – ենթակա
3. **պատրաստ** – ուղիղ խնդիր
4. **հայտնի չէր** – պարզ ստորոգյալ
5. **օր** – ժամանակի պարագա
6. **ոչ ոքի** – հանգման խնդիր

37 **Ո՞ր տարբերակներում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված *(տրված խոսքի մասով արտահայտված ենթակա չկա):***

1. Ամեն ոք անում էր իր մտքով անցածը, բայց բոլորը միասին ստեղծում էին մի հեքիաթային վառ ու գունեղ փարիզյան մթնոլորտ: *(դերանուն)*
2. Տխրությունս անուշ է որպես Հեռավոր, հեռավոր կարկաչ: *(ածական)*
3. Ու եկողներն էլ խորհուրդ չեն տալու Փնտրել անհնարն ու անկարելին: *(անդեմ բայ)*
4. Ո՞վ տվեց մարդուն այն իրավունքը, որ իշխի իր նմաններին: *(գոյական)*

38 **Ո՞ր նախադասություններում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ինչպիսի ցնցող տպավորություն թողեց մեզ երիտասարդ գրողներիս վրա նրա նոր գիրքը:
2. Նավի առաջամասում գլխիկոր կանգնածը մտախոհ դիտում էր վճիտ ջրի մակերևույթը մարմարի նման անշարժ և մարմարի նման ողորկ:
3. Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
4. Բոլորին մեկ առ մեկ աչքի անցկացնելուց հետո հպարտ կեցվածքով վեր կացավ նստած տեղից ու մոտենալով ձեռքով բարևեց յուրաքանչյուրիս:
5. Լուսնկա գիշերներին խարույկի մոտ երիտասարդը ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց սազի հոգեհմա ելևէջները ծովի անուշ ձայնը:

39 **Նախադասության անդամներից քանիսի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:**

Եթե շրջանցեինք վարարած գետը կամ գնայինք մեծ ճանապարհով, որ հեռացնում էր մեր նպատակակետը, կկորցնեինք շատ ժամանակ, ուստի գետի միջով անվարան գնացինք առաջ:

- **շրջանցեինք** – սահմանական եղանակ
- **շատ** – չափի մակբայ
- **կկորցնեինք** – պատճառական բայ
- **որ** – հարաբերական դերանուն
- **վարարած** – ածական
- **առաջ** – տեղի մակբայ

40 **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

հանդիպակաց, հափշտակել, անհողդհողդ, երկորյակ, դիցուկ, կառկառուն, գաղթագողի, լայնափողկ:

41 **Տրված բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

մարդ-մուրդ, առոք-փառոք, մաս-մաքուր, քաղցր-մեղցր, լեփ-լեցուն, լավ-վատ, նետ-աղեղ, աման-չաման:

42 **Տրված բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.**

մեներգ, բանասեր, գիսաստղ, հրշեջ, աշխատավարձ, ատամնաբույժ, հողատեր, մաքսանենգ:

43 **Տարբերակներից քանիսո՞ւմ է ընդգծվածը գերադաս նախադասություն:**

- Դաժան բանտում եղբոր զարհուրելի նահատակությունը խելագարեցնում էր նրան, և **հոգին ամենևին չէր ուզում ընդունել,** որ եղբայրն այլևս չկա:
- Ով էր դա՝ **ոչ ոք չէր կռահում**, որովհետև դիմակալի տակ դժվար էր ճանաչել նրան:
- Կրակը քրքջում էր մշակների միամիտ փորձերի վրա, և բոցերի լեզուները, **թվում է**, արձակում էին դիվային հռհռոցներ:
- Դու սրբություն չես ճանաչում, և **դրանից է,** որ քո սուրը հենց քո դեմ է ուղղվում:

44 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված.**

հանգավորում, համեմատություն, մակդիր, հակադրություն, չափազանցություն:

Թղթից շինած ծաղիկների պես հիվանդոտ,
Թոքախտավոր ստեղների պես ռոյալի,
Փոշուց կերած նկարների նման անթով,
Որպես մեռած գեղեցկուհու մի հայելի՝
Հոգիս տխրել է անբարբառ ու չգիտի՝
Ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում,
Երբ ոչ մի լույս դրսից ընկած ճառագայթի
Չի՜ ամոքում նրա կարոտը անանուն:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Միակազմ նախադասությունները չունեն կիրառության նույն հաճախականությունը, ինչ երկկազմները:
2. Անվանական անդեմ նախադասություններում բայ չի կարող լինել:
3. Թերի նախադասություններում ամբողջությամբ զեղչված ստորոգյալը չի կարող վերականգնվել:
4. Անդեմ նախադասությունները, ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության, լինում են երկու տեսակի՝ անվանական և բայական:
5. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններից մեկը կարող է լինել միակազմ:
6. Թերի նախադասության մեջ ենթական և ստորոգյալը միաժամանակ չեն կարող զեղչվել:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքի բոլոր թվերի դիմաց են ճիշտ նշված:**

Պապի շքախմբի անդամները զբոսնում էին հե-ենական(1) հինավուր-(2) մայրաքաղաքում և դիտում շուրջբոլորը: Շուկայի խլրտուքը ապշեցնում էր: Միր-կան(3) երկարաքղանցք հագուստները խառնվում էին բյուզանդական ոսկ-առ(4) պատմուճաններին: Կային զգ-շավոր(5) վաճառականներ, խր-վիլակներ(6) հիշեցնող սևամոր-(7) գերիներ: Մի կին խ-թին(8) բարբառով ինչ-որ աղո-քներ(9) էր մրմնջում: Արաբները վաճառում էին ու-տեր(10) ու ձիեր:

1) 1-ll, 2-ձ, 5-ու, 10-ղ
2) 3-իա, 6-տ, 7-թ, 10-ղ
3) 2-ձ, 6-տ, 8-ր, 9-թ
4) 3-իա, 4-և, 7-թ, 8-ր

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի ը-ն ճիշտ տեղադրված:**

1) խճ(ը)ճվել, ս(ը)պանել, ընկ(ը)րկել
2) դռ(ը)նբաց, տ(ը)ռտմել, խ(ը)մբվել
3) կ(ը)նճռոտ, քն(ը)նել, գտն(ը)վել
4) կ(ը)րկնել, հանգց(ը)նել, ձեռն(ը)տու

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1) սենեկապետ, երևութական, բնափայտ
2) դիտանցք, կտրուկ, երգչախումբ
3) միջանցք, փափկասուն, դպրոց
4) վերնատուն, օրինապահ, ընչացք

49 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **խայտաճամուկ** – վառ և բազմազան գույներով, **դարակազմիկ** – նոր դարաշրջան բացող
2) **երախայրիք** –օգտակար խորհուրդ, **հանգրվան** – հանգստանալու տեղ, կայան
3) **աղորիք** – հացահատիկ աղալու մեքենա, **նյութել** – որևէ դավանության հետևել
4) **քիվ** – ժայռի խոռոչ, **կոչնակ** – եկեղեցի հրավիրող զանգ

50 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) հրավեր, երաշտ, սնոտի
2) դատարկ, խնդիր, գողոն
3) պնակ, սնունդ, տրտում
4) ճանապարհ, ընկույզ, նաժիշտ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված մեկ արմատից և երկու ածանցից:**

1) համապարփակ, անարժեք, մակերեսային, չխոսկան
2) վարկավորում, բուրաստան, վերաքննիչ, տարատեսակ
3) անընթեռնելի, դժկամորեն, բեմադրիչ, համալսարան
4) տմարդի, ապավինում, փոխօգնություն, բաղդատական

52 **Ո՞ր շարքի բառերից *ոչ մեկի* որևէ արմատի *չի* կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ***-ային*** – առաջնեկ, խորհրդակցել, մազանոթ
2) ***-մունք*** – փետրվար, անբաժանելի, ուսանող
3) ***-ոն*** – պարագլուխ, ծամկալ, տերևաթափ
4) ***-ենի*** – նշաձող, ինձուինձ, թզուկ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ներքին հոլովման:**

1) եղբայր, գարուն, դեղատուն
2) հուշասյուն, ցասում, գայլաշուն
3) ձյուն, բազմանկյուն, ազգանուն
4) վանահայր, ուրախություն, ավյուն

54 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Նա ինձ առաջնորդեց մի ուրիշ սենյակ, և այդ վայրկյանին այնտեղից արագ քայլերով դուրս եկավ մի կարճահասակ ծերունի:
2) Կապույտ երկնքում՝ արևի դիմաց, մի երկու րոպե շողում են սավառնակի թևերն ու մարմինը:
3) Հենց որ տաղտուկ եմ զգում, ցանկություն եմ ունենում մարդկանց տեսնելու, անմիջապես նստում եմ ուղղաթիռ ու թռչում:
4) Նա մոտեցավ չարխին, և ոտքերն սկսեցին շարժվել համաչափ ռիթմով:

55 **Ո՞ր նախադասության բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) Ես կրունկներով խփեցի ձիու կողերին, մի անգամ էլ նա կանգնեց հետին ոտքերի վրա, զիլ խրխնջաց և առաջ նետվեց:
2) Ձին թռավ որթատունկերի և փոքր ծառերի վրայով և ինձ գետին գցելով՝ վազեց հեռու:
3) Այն ժամանակ, երբ շեն էր Մանասի խրճիթը, Օրանջիայի ձորակում մասրենիներ չկային, տան պատերի վրայով խլեզները չէին վազվզում, վայրի վարդերի տեղ բոստանում վարունգն էր ծաղկում:
4) Բողարը ջահել շուն էր. գայլից դեռ մի քիչ վախենում էր, այդ պատճառով էլ հաչում էր դեռ հեռվից:

56 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը տկարացել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է սպասվում վաղը:
2) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և ենթադրվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:
3) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:
4) Ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:

57 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են շաղկապներ:**

1) քան, որ, իսկ, գոնե
2) թե, թե չէ, կամ, արդյոք
3) թեկուզ, հենց, որովհետև, հանուն
4) եթե, բայց, քանի դեռ, թեպետ

58 **Ո՞ր նախադասության մեջ պակասավոր բայ *չկա:***

1) Չգիտեմ՝ որտեղից է գալիս Ջուբակի հեկեկանքը տրտում:
2) Արժե՞ր, որ այդքան դու քեզ քրքրեիր, Երբ որ ուժերդ չէին ներելու:
3) Ես կգամ, կնստեմ հողիդ, Եվ հողդ զորանալ կտա:
4) Երբ նայում է, որ ափերին ես չկամ, Մոլորվում է Լորագետը ու գնում:

59 **Տրված նախադասություններից որի՞ դիմաց է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:**

1) Ներկաների համար պարզ էր, որ կինը հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս: *(ենթակա)*
2) Քո նվերը ինձ այն կլինի, եթե կարդաս մեր դասականներին: *(պայմանի պարագա)*
3) Զորյանի կինը՝ տիկին Սաթենիկը, շատ սիրալիր ինձ ներս հրավիրեց, թեև ինձ չէր ճանաչում: *(զիջման պարագա)*
4) Երիտասարդներից մի փոքր հեռու նստած էր ավանի փոստատան կառավարիչը, որ բարեղեմ, խելոք աչքերով և գորշավուն մորուքով մի մարդ էր: *(բացահայտիչ)*

60 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Այն օրը, երբ Գևորգը վերադարձավ ճամփորդությունից, որոշեցին նրան ամուսնացնել:*
   Գևորգի՝ ճամփորդությունից վերադառնալուն պես որոշեցին նրան ամուսնացնել:
2) *Հոր երազանքն այն է, որ որդին իր նման քանդակագործ դառնա:*
   Որդու՝ իր նման քանդակագործ դառնալը հոր երազանքն է:
3) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*
   Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:
4) *Գյուղի բնակիչները վախից կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որ թշնամու դիրքերից չէին երևում:*
   Գյուղի բնակիչները վախից կծկվել էին բարձրաբերձ լեռան՝ թշնամու դիրքերից չերևացող անմատչելի ծերպերում:

61 **Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածը *(դերբայը իր բոլոր լրացումներով)* ճիշտ ընդգծված (նախադասությունները կետադրված չեն):**

1) Արտառոց է ինձ համար երբ դրամատիկական երկը համեմատում են բամբակի իսկ ներկայացումը <u>նրանից ստացված հագուստի հետ:</u>
2) <u>Երկար ճանապարհից հոգնած տարեց</u> ուղևորը գլուխը հենել էր գնացքի պատուհանին:
3) Նրա ձախողման <u>պատճառը ուսուցչի հանձնարարությունները ժամանակին չկատարելն</u> էր:
4) Պատերազմից հետո մենք <u>ձեռքներս փողոցի անցորդներին պարզած</u> կանգնել էինք եկեղեցու դռան մոտ:

62 **Ո՞ր նախադասության մեջ փակագծեր *չպիտի* դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ի վերջո դժվար կյանքս ու խաբված սերերս էին որ ինձ դարձրին այն ինչ կամ և համարձակվում եմ ասել ի դեպ սա ինքնագովություն չէ ես ինձ դուր եմ գալիս:
2) Տաթևի նշանավոր վանքում Հովհան Որոտնեցու նա նաև նույնանուն համալսարանի հիմնադիրն էր ծավալած գործունեության շնորհիվ միջնադարյան Հայաստանում Տաթևը կրթական խոշոր կենտրոն է դառնում:
3) Նա սաստիկ ձանձրանում էր գյուղն իր տեղը չէր ու ինքն էլ այլ պլաններ էր ուղեղում փայփայել:
4) Հիշում եմ երբ Վանի արևը կանգնում էր զենիթում փոքր ժամանակ արևն ինձ մեծ շատ մեծ էր թվում հանկարծ ծովից եկող մեղմ սյուքը փարվում էր քաղաքին:

63 **Հատվածներից ո՞րն է Հ. Սահյանի «Քարափը» բանաստեղծությունից:**

1) Ծանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հանճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
2) Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:
3) Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ…
4) Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սողոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

64 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի –
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի…

1) «Դանթեական առասպել»
2) «Վահագն»
3) «Անվերնագիր»
4) «Մահվան տեսիլ»

65 **Ո՞ր նախադասության մեջ միայն մեկ որոշիչ կա:**

1) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց:
2) Մահախուճապ սերունդների Աչքն է դիպել լույս գագաթին Ու անցել:
3) Երևան են ժամանել յոթանասուն խոշորագույն աստղաֆիզիկոսներ:
4) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր:

66 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Սարոյանը գրել է՝ …… իր …. գրողներից մեկի՝ Անտոն Չեխովի …. սկզբունքին. «Իրավացի է նա, ով անկեղծ …..»:

(1. եմ, 2. հետևել, 3. սիրել, 4. հռչակել)

1) 4, 2, 1, 3
2) 2, 4, 1, 3
3) 4, 3, 2, 1
4) 2, 3, 4, 1

67 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չէ բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով: Երկրագնդում կան վայրեր, որտեղ ֆիզիկայի ինչ-ինչ օրենքներ պարզապես չեն գործում, օրինակ՝ որոշ վայրերում գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, ուրիշ տեղերում առարկաները, որոնք իրականում ուղիղ են կանգնած, ինչ-որ անկյան տակ գետնի վրա թեքված են երևում: Այդպես է, օրինակ, մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկում՝ Կալիֆոռնիայում գտնվող մի փոքրիկ բնակավայրում, որտեղ առաջին անգամ բնակություն են հաստատել հնդկացիները: Այստեղ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնում, թեև ըստ հարթաչափի՝ հիմքը կատարելապես ուղղված է լինում: Ավելին՝ մարդիկ այստեղ իրենց իրական հասակով չեն երևում. ըմանք՝ ավելի բարձրահասակ, մյուսներն ավելի կարճահասակ են թվում:

Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդպիսի անսովոր երևույթներ դիտվում են երկրագնդի տարբեր վայրերում, սակայն հարկ է նշել, որ տարածքները, որոնցում գործում են նման անոմալիաները, խիստ սակավաթիվ են:

Այդ տարածքներն իրենց հետաքրքրությամբ գրավում են զբոսաշրջիկների, ուստի և այդ՝ եկամտաբերության առումով բարենպաստ վայրերում հյուրատներ կառուցող ինժեներների ուշադրությունը:

1. Կալիֆոռնիայի մի բնակավայրում կան տներ, որոնք նույնիսկ վերակառուցումներից հետո էլ ուղիղ չեն կանգնում՝ հակառակ հարթաչափի ցույց տվածի:
2. Հնդկացիները պարզել են, որ Կալիֆոռնիայում ֆիզիկայի մի քանի օրենքներ չեն գործում:
3. Աշխարհի տարբեր վայրերում դիտվող անսովոր երևույթները հետաքրքրություն են առաջացնում զբոսաշրջիկների և նրանց համար կացարաններ կառուցող ինժեներների համար:
4. Երկրագնդի որոշ վայրերում դրսևորվում են այնպիսի անոմալ երևույթներ, որոնց պատճառը մերօրյա գիտությունը դեռևս չի կարողանում պարզել:
5. Երկիր մոլորակի բոլոր այն վայրերում, որտեղ անոմալ երևույթներ են նկատվում, մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվում:

68 **Ո՞ր նախադասություններում բայի սխալ ձև կամ բայաձևի սխալ գործածություն կա:**

1. Հենց այդ պահին՝ փողոցն անցնելուց, զգաց, որ գլխապտույտ ունի:
2. Երբ փորձում էի նրան հիշեցնել տված խոստումները, չլսելու էր տալիս:
3. Դաշտի խաղաղության մեջ քնքշորեն բուրացող ծաղիկները մի պահ մեղմեցին նրա հոգու ցավը:
4. Անծայրածիր հեռուներում սևին տվող լեռների սուր կատարները ահարկու տպավորություն էին թողում:

69 **Ո՞ր հատվածներում հանգման անուղղակի խնդիր կա:**

1. Ինչպես ծերունին ձայնով պառաված
   Ձայնակցում է ժիր թռռնիկի երգին,
   Այնպես էլ ծերուկ անտառը կամաց՝
   Արձագանք տալիս ջրի աղմուկին:
2. Բայց հուշերիս մեջ նայում ինձ դարձյալ,
   Ժպտում են դարձյալ աչքերը քո ջինջ:
3. Ու քարշ եմ գալիս ու քարշ եմ գալիս,
   Անքուն ջրի պես դիպչում քարերին,
   Անշունչ քարին էլ երնեկ եմ տալիս:
4. Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,
   Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Այսքան, այդքան, այնքան*** ցուցական դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես բայի լրացում:
2. ***Ես, դու, նա, ինքը*** անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում հոլովվում են գոյականից տարբեր՝ դերանվանական հոլովմամբ:
3. Հարաբերական դերանունները չեն դառնում նախադասության անդամ:
4. Անորոշ դերանուններից ոչ մեկը ենթակայի պաշտոն կատարել չի կարող:
5. ***Ես ինքս, դու ինքդ, նա ինքը*** կապակցությունների երկրորդ բաղադրիչները բացահայտիչներ են:
6. Հայերենի ժխտական դերանուններն են՝ ***ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի, ոչ միայն, ոչինչ:***